



ՆԱԻՐԱ ՇԱՀԻՆՅԱՆ

*ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիր,
քրեական դատավարության ամբիոնի
ուսումնական ասիստենտ,
իրավագիտության մագիստրոս,
ոստիկանության կապիտան*

**ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՆՈՐ ՄՈԴԵԼԸ ՊԵՏԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ, ԹԵ՛ ՄԱՍՆԱՎՈՐ
ԳԱՆԳԱՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ
«ՕՐԻՆԱԿԱՆ» ԱՆՏԵՍՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է մասնավոր մեղադրանքի վարույթով նախատեսված իրավական կարգավորումների ուսումնասիրությանը: Նկատի ունենալով վարույթի նորույթ լինելը ՀՀ իրավական համակարգի համար՝ հոդվածում հետազոտվել է մասնավոր մեղադրանքով վարույթի շրջանակներում քննության առարկա դարձող հանցակազմերի շրջանակը, դրանց բնույթն ու համապատասխանությունը վարույթի առանձնահատկություններին:

Քանի որ տուժողը նոր կարգավորումների համաձայն դարձել է մասնավոր մեղադրանքով վարույթի գործերով ապացուցման պարտավորության հիմնական կրողը, տարբեր իրավական ակտերի ուսումնասիրության միջոցով հոդվածում ներկայացվել են տուժողի սահմանափակ իրավաբանական հնարավորություններն այդ պարտականությունն իրացնելիս: Օրենսդրական կարգավորման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև նշված վարույթով անձի՝ մեղադրյալի կարգավիճակի ձեռք բերումը, ուստի ներկայացվել են նաև այդ կարգավիճակի ընկա-

լումներն այլ իրավական ակտերում և դրա ազդեցությունը մեղադրանքը հիմնավորող նյութերի կշռի վրա: Առանձնակի ուշադրություն է դարձվել քրեական հայցին ներկայացվող պահանջներին, քննարկման առարկա է դարձել քրեական դատավարության օրենսգրքի «մեղադրանքը հիմնավորող նյութեր» ձևակերպումը և պահանջը, որ դատարան կանչվող անձանց բնակության կամ հաշվառման հասցեները պետք է մատնանշվեն քրեական հայցում:

Նկատի ունենալով դիսպոզիտիվության տարրերի ուժեղացումը մասնավոր մեղադրանքով վարույթում՝ համեմատական վերլուծություն է անցկացվել քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության համապատասխան կարգավորումների միջև:

Բացահայտվել են անձի կողմից պարբերաբար նույնաբնույթ հանցագործություններ կատարելու դեպքում մասնավոր մեղադրանքի գործով հանրային քրեական հետապնդում հարուցելու հնարավորությունները՝ դատախազին համապատասխան հայեցողական լիազորությամբ օժտելու համատեքստում:

Հիմնաբառեր. մասնավոր գանգատ, տուժող, մեղադրյալ, ապացուցման բեռ, հայեցողական լիազորություն, մասնավոր դատարան:

Գիտակցելով հանցագործությունների հանրային իրավական նշանակությունը՝ մեղադրանքի դժվար և պատասխանատու գործառույթը մեր ժամանակներում պետությունները վերցրել են իրենց ձեռքը, այլ կերպ ասած՝ այժմ մեղադրանքը հանդիսանում է (առավելապես) պետական գործառույթ, այն իրականացնում են պետական պաշտոնատար անձինք և պետական մարմինները:

Սակայն պետական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպումն իր դրական կողմերի հետ մեկտեղ որոշակի բացասական հետևանքներ է առաջացնում (ծագում են մեղադրանքի «քաղաքականացվածության», պետական մեղադրանք իրականացնող մարմինների ռեսուրսների

անբավարարության վտանգներ, անտեսվում կամ երկրորդային պլան են մղվում հանցագործության զոհի շահերը և այլն): Հետևաբար առաջանում է ընդհանրապես մասնավոր անձանց և մասնավորապես հանցագործությունից տուժած անձի մեղադրանքի իրականացման, մասնակցության անհրաժեշտությունը¹:

Հայրենական դատավարագիտության մեջ մասնավոր մեղադրանքի ինստիտուտը՝ պատմական զարգացումից մինչև մերօրյա կարգավորումներ, առաջին անգամ համակողմանի ներկայացվել է Ա. Ղազարյանի կողմից: Մասնավոր մեղադրանքի ինստիտուտը հայտնի է տարբեր իրավական մշակույթներին դեռևս պատմական վաղ ժամանակներից: Այն ամրագրված է եղել Գերմանիայի 1877 թ.-ի քրեական դատավարության կանոնադրությունում, նախատեսված է եղել Ֆրանսիայի 1808 թ.-ի նապոլեոնյան քրեական դատավարության օրենսգրքով: Իրավունքին հայտնի են մասնավոր մեղադրանքի հետևյալ տեսակները՝ հիմնական, լրացնող և սուբսիդիար, ինչպես նաև մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող տեսությունները, ինչպիսիք են մասնավոր դելիկտի, տուժողին գթալու, պետական մեղադրանքի միջոցների խնայողության տեսությունները: Մասնավոր մեղադրանքը դիտարկվում է իբրև տուժողի արդարացի բավարարման, պետական մենիշխանության չեզոքացման և քրեական հետապնդման արդյունավետության բարձրացման միջոց²:

«Հ քրեական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ Օրենսգիրք) արմատապես փոխեց մասնավոր մեղադրանքի մոդելը՝ լրացնող մասնավոր մեղադրանքից անցում կատարելով հիմնական մասնավոր մեղադրանքի մոդելին՝ սահմանելով որոշ բացառություններ դատախազի համար: Հայրենական դատավարագիտության մեջ մասնավոր մեղա-

¹ **Ղազարյան Ա.Ա.**, Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունները քրեական դատավարությունում, ատենախոսության սեղմագիր: Երևան, 2021 թ., էջ 3:

² **Ղազարյան Ա.Ա.**, Մասնավոր մեղադրանքը և մասնավոր մեղադրանքի գործերը մրցակցային քրեական դատավարությունում: Երևան, 2022:

դրանքի վարույթով ապացուցման բեռը նախաքննական մարմնից դեպի տուժողի պարտականություն տեղափոխելը թերևս առանցքային նորարարություն էր:

Նման մոտեցումը հեղինակների կողմից հիմնավորվում է հանցանքների այդ խմբի հանրային ոչ մեծ վտանգավորության, քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների համեմատաբար դյուրին պարզման, ինչպես նաև մինչդատական վարույթի բեռնաթափման հաշվին պետական միջոցների խնայողության հանգամանքներով¹: Այն, որ ապացուցման գործընթացը մինչդատական վարույթից տեղափոխվում է դատարան, առերևույթ տպավորություն է ստեղծվում, որ մինչդատական վարույթի բեռնաթափման հաշվին ծանրաբեռնվում են դատարանները, սակայն դա այդքան էլ ճշմարիտ չէ: Այսպես՝ մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները պարտադիր հետազոտվում են նաև դատարանում, մասնավոր մասնակիցները կրկին հարցաքննության են ենթարկվում, որպիսի պայմաններում տեղի է ունենում մասնավոր մեղադրանքի վարույթով գործերի քննության անհարկի կրկնություն: Մինչդատական վարույթի առկայությունը կարող է միայն մասամբ բեռնաթափել դատարանի ծանրաբեռնվածությունը, սակայն մասնավոր վարույթը միանգամից դատաքննության փուլով սկսելը մոդելի ճիշտ գործարկման պայմաններում կարող է էականորեն բեռնաթափել մինչդատական վարույթի ծանրաբեռնվածությունը: Բացի այդ, այն քաղաքացիների գործերի ավելի արագ և արդյունավետ լուծման միջոց կարող է լինել՝ վերջիններիս զերծ պահելով իրավապահ տարբեր մարմինների մոտ իրենց գործը քննության առարկա դարձնելու քաշքշուկներից, քանի որ մինչդատական վարույթի ծանրաբեռնվածության, իրավապահ մարմինների կողմից ուշադրությունը հատկապես հանրային կարգով իրականացվող գործերի վրա սևեռելու հոգեբանական և մասնագիտական

¹ Դուկայան Հ.Հ., Մելքոնյան Դ.Մ., Նիկողոսյան Ա.Ս., ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ., էջեր 571-572:

հակման պայմաններում նրանց գործերն առնվազն պատշաճ ջանասիրությամբ և ողջամիտ ժամկետում չեն կարող քննության առարկա դարձվել: Այսպիսի մոտեցումը սուկ ենթադրություն չէ, այն ունի նաև իրավական հենք. Օրենսգրքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ իր վարույթում գտնվող քրեական գործերի քննության հաջորդականությունը որոշելիս դատավորը նախապատվությունը պետք է տա այն վարույթին, որով մեղադրյալը գտնվում է կալանքի տակ, իսկ նախաքննության փուլում ձերբակալված անձը կալանավորման նպատակով դատարան պետք է ներկայացվի ոչ ուշ, քան ձերբակալման 60 ժամը լրանալը: Մասնավոր մեղադրանքով վարույթն այն իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների կամ դատավորների կողմից առանձին քննության առարկա դարձվելու պարագայում այսպիսի իրավակարգավորումները չեն հանգեցնի այդ գործերի հետին պլան մղվելուն:

Դատավարագիտության մեջ խարդախության հանցակազմի հետ կապված կարծիք է ներկայացվել, որ դրա ապացուցումը տուժողի կողմից էականորեն բարդ է, քանի որ հատուկ պրոֆեսիոնալիզմ է պահանջվում նախապես ծագած դիտավորությունը հիմնավորելու համար¹: Սակայն պետք է փաստել, որ հենց խարդախության գործերով մասնավոր մեղադրանքի նոր մոդելի ներդրումը կարող է առավել արդյունավետ լինել, քանի որ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում շատ հաճախ նույնիսկ ճնշող ապացույցների առկայության դեպքում իրավապահ մարմինները հղում են կատարում քաղաքացիական օրենսդրությանը՝ խարդախության հանցակազմը ներկայացնելով իբրև քաղաքացիաիրավական հարաբերություն՝ առանց պատշաճ քննություն կատարելու: Նման արատավոր պրակտիկա առկա է նաև Միացյալ Թագավորությունում, որտեղ ևս իրավապահ մարմինները հղում են կատարում քաղաքացիական օրենսդրությանը, իսկ

¹ **Ղազարյան Ա.Ա.**, Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելի հիմնախնդիրների մասին, Պետություն և իրավունք N 3 (88) 2020:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 2(110)2023

քաղաքացիական դատարանների ծանրաբեռնվածությունը հանգեցնում է այդ գործերի ոչ պատշաճ քննության, որպիսի պայմաններում մասնավոր դատարանները նման գործերի առավել արագ և արդյունավետ քննության միջոց են դիտարկվել, որի նպատակը Միացյալ Թագավորությունում ոչ այնքան պետական միջոցների խնայողությունն է, որքան պետական մենիջխանության չեզոքացումը խարդախության հանցակազմերին գնահատական տալիս¹:

Ներկայացված առավելություններով հանդերձ, մասնավոր մեղադրանքով վարույթն ունի որոշակի իրավակարգավորումներ, տարընթերցումների տեղիք տվող ձևակերպումներ, որոնք, իրավակիրառ պրակտիկայում ենթարկվելով տարաբնույթ մեկնաբանությունների, կարող են հանգեցնել վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքների և օրինական շահերի անտեսման: Բացի այդ՝ Եվրոպական միության «Արադարադատության մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում կատարված հարցումները ցույց են տվել, որ համաձայն դատարանների գործունեության հանրային ընկալումների, դատավորների ինքնագնահատման և մասնագիտական գնահատումների՝ ՀՀ-ում քաղաքացիները դատարաններ դիմում են որպես գործի լուծման վերջին միջոց, հաճախ էլ չեն դիմում անվստահության, ֆինանսական միջոցների կամ ժամանակի բացակայության, ինչպես նաև դատական գործերի ձգձգման ու ընթացակարգային քաշքշուկների, մարզերում նաև դատարանների ոչ մատչելի տեղակայման պատճառով²:

¹ Private prosecutions, fraud advisory panel, an introduction to UK legislation | July 2020 | second edition,

<https://www.fraudadvisorypanel.org/wp-content/uploads/2020/07/Private-Prosecutions-2nd-ed-july2020.pdf>, վերջին դիտում՝ 01.05.2023 թ.:

² Սվանիձե Է., Հարությունյան Հ.Գ., Մատինյան Տ.Գ., Արդարադատության ոլորտի վերաբերյալ հանրության կարծիքները և ակնկալիքները Հայաստանում, ԵՄ «Արդարադատության մոնիթորինգ» ծրագիր Հայաստան, մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ զեկույց, 2017, էջեր 87-92:

https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1057954891731_Justice_Monitoring.pdf

վերջին դիտում՝ 01.05.2023 թ.:

Օրենսգրքի 453-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթն սկսելու մասին որոշում կայացնելու պահից այն անձը, որի դեմ քրեական հայց է ներկայացվել, ստանում է մեղադրյալի կարգավիճակ, իսկ այն անձը, որը քրեական հայց է ներկայացրել, ճանաչվում է տուժող: Հատկանշական է, որ ի տարբերություն դատախազի կողմից հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշման կայացման ընթացակարգի, մասնավոր մեղադրանքի գործերով վարույթում դատարանին մասնավոր քրեական հետապնդում հարուցելու առանձին որոշում կայացնելու լիազորություն չի վերապահվել: Այսպիսի կարգավորումը հեղինակները մեկնաբանում են որպես ընդհանուր կարգով իրականացվող վարույթին բնորոշ առանձին որոշումներ կայացնելու ձևականությունից դատարաններին զերծ պահելու միջոց¹: Գտնում ենք, որ այսպիսի կարգավորումն ունի ավելի խորը ենթատեքստ, քան պարզապես դատարանին հավելյալ որոշմամբ չձանրաբեռնելու պարզ հաշվարկը կարող էր լինել: Նկատի ունենալով, որ Սահմանադրության 176-րդ հոդվածի ուժով քրեական հետապնդում հարուցելը դատախազի բացառիկ լիազորությունն է, որում առանձնացված չեն հանրային և մասնավոր գանգատները, ստացվում է, որ դատավորի կողմից քրեական հետապնդում հարուցելու որոշման կայացումը հակասահմանադրական կլիներ: Բացի այդ՝ այն կհակասեր դատարանի արդարադատություն իրականացնելու բացառիկ ֆունկցիային՝ փաստացի նրան դասելով քրեական հետապնդման մարմինների շարքին: Ուստի հարց է առաջանում. քրեական հայցն ստանալիս դատարանը գնահատում է անձին մեղադրյալ ճանաչելու՞, թե՞ քրեական վարույթ սկսելու բավարար հիմքերի առկայությունը (նկատի ունենք դեպքի առկայությունը հիմնավորող փաստական տվյալները): Քրեական վարույթ սկսելու որոշում կայացնելով՝ անձի՝ մեղադրյալի կարգավիճակի ձեռքբերման կարգավորմամբ այն աստիճան են միաձուլվել այս երկու տարբեր դատավարական գործողությունները, որ անհնար է թվում դրանց

¹ Ղուկասյան Հ.Հ., Մելքոնյան Դ.Մ., Նիկողոսյան Ա.Ս., Նույն աշխատությունը, էջ 575:

առանձին գնահատական տալը, հետևաբար կարևոր է, թե պրակտիկայում դատավորի կողմից որ ասպեկտը կգրավի գերակշռող ուշադրությունը: Ինչպես ցույց կտանք հետագա շարադրանքում, դատարանը գլխավորապես պետք է ուշադրություն դարձնի քրեական վարույթ սկսելու համար բավարար հիմքերին՝ դեպքի առկայությանը և եթե որոշում է սկսել քրեական վարույթ, այդ որոշմամբ ինքնին քրեական հայցում մատնանշված անձը ձեռք կբերի մեղադրյալի կարգավիճակ՝ առանց դատավորի ուղղակի միջամտության, որը հետևանք է ավելի շուտ տուժողի՝ անձին որպես ենթադրյալ հանցանք կատարողի մատնացույց անելու հանգամանքին: Թեև ձերբակալման և անձին մեղադրյալ ճանաչելու դատավարական ընթացակարգերն ունեն ինստիտուցիոնալ տարբերություններ և համեմատությունը կարող է տեղին չթվալ, այդուհանդերձ այսպիսի մոտեցումը նման է ակնհաստեսի ուղղակի մատնացույց անելու տրամաբանությամբ անձին ձերբակալելու իրավակարգավորմանը: Ձերբակալված անձը, զրկվելով ազատությունից, պահվելով ՁՊՎ-ում, իրավական և բարոյական առումով պակաս զրկանքներ չի կրում, քան անձը, որը մասնավոր մեղադրանքի վարույթով ձեռք է բերել մեղադրյալի կարգավիճակ:

Քրեական վարույթ սկսելու որոշման կայացման պահից քրեական հայցի հիման վրա անձին մեղադրյալի կարգավիճակ տալու հարցի քննարկումը կարևորություն է ներկայացնում հատկապես տուժողի կողմից այդ մեղադրանքը հիմնավորող նյութեր ներկայացնելու պարտավորության համատեքստում: Օրենսդրական մակարդակում պարզաբանված չէ, թե այդպիսի նյութերի ինչպիսի կշռի մասին է խոսքը, որը պետք է անհրաժեշտ և բավարար լինի քրեական վարույթ սկսելու որոշում կայացնելու համար:

Այսպիսի պայմաններում մտայնություն է առաջանում առ այն, որ քրեական հայցի համար ապացուցողական բարձր շեմ նախատեսելը կարող է վտանգի տակ դնել տուժողի շահերը, իսկ ցածր շեմ սահմանելը՝

մեղադրյալի շահերը: Համեմատական վերլուծության ենթարկենք այդ հանգամանքները.

1. Օրենսդրական կարգավորումներ և հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ քրեական հայցին կարող է ներկայացվել ապացուցողական բարձր շեմ.

Առաջին և ամենակարևոր փաստարկն այն է, որ համաձայն Օրենսգրքի 453-րդ հոդվածի 2-րդ մասի՝ քրեական վարույթ սկսելու մասին որոշում կայացնելու պահից այն անձը, որի դեմ քրեական հայց է ներկայացվել, ստանում է մեղադրյալի կարգավիճակ: Սա նշանակում է, որ բացառապես քրեական հայցում շարադրված փաստական հանգամանքները a priori պետք է բավարար լինեն, որ դատարանի կողմից առանց որևէ ստուգողական գործողություն կատարելու անձը ձեռք բերի մեղադրյալի կարգավիճակ: Այստեղ կարևոր նշանակություն է ձեռք բերում մեղադրյալի կարգավիճակի ընկալումն այլ իրավակարգավորումներում՝ հասկանալու համար այդ կարգավիճակի ազդեցությունը մեղադրանքը հիմնավորող նյութերի կշռի վրա:

Այսպես՝ քրեական օրենսգրքի 480-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար չհաստատված հանցագործության դեպքով կամ առանց դեպքին անձի մասնակցությունը հիմնավորող կամ բավարար չափով հիմնավորող կամ առանց նրա արարքում հանցակազմը հավաստող փաստական տվյալների առկայության: Նշված հոդվածի իմաստով քրեական պատասխանատվության ենթարկելն իրենից ենթադրում է առավել ընդգրկուն հասկացություն և այն սկսվում է անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելուց ու ավարտվում է անձի նկատմամբ համապատասխան դատավճիռ կամ դատական այլ ակտ կայացնելով¹: Նույն օրենսգրքի 482-րդ հոդվածը

¹ Թումայան Դ.Ա., Հովհաննիսյան Կ. Հ., «Քրեական իրավունք, հատուկ մաս: Եր., 2022 թ., էջ 84:

ՍԱՀՄԱՆԱՐՈՎՎԱԿԱՆ ՂԱՏՄԱՆ 2(110)2023

պատասխանատվություն է նախատեսում ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական ակտ կայացնելու համար: Քրեական վարույթ սկսելու մասին որոշումը որպես դատական ակտ, եթե ապօրինի կայացվի, 482-րդ հոդվածի հանցակազմի հատկանիշներ կարող է պարունակել: Թեև հանցակազմի պարտադիր հատկանիշներ են արարքը կատարելը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, այդուհանդերձ այսպիսի կարգավորումները վկայում են թե՛ հանրային և թե՛ մասնավոր գործերով անձին մեղադրյալի կարգավիճակ տալու կարևորության մասին: Մեղադրյալի կարգավիճակի կարևորումը քրեական իրավունքի համատեքստում վկայում է, որ դատավարական իմաստով այն չի կարող անտեսվել և դատարանները հակված կլինեն մեղադրանքը հիմնավորող նյութերին ապացուցման այնպիսի բարձր շեմ ներկայացնել, որ իրենց անաչառությունը կասկածի տակ չդրվի:

Իբրև հակակշիռ կարող է ներկայացվել Օրենսգրքի 457-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, որի համաձայն արդարացման դատավճիռ կայացնելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 456-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ (տուժողը հրաժարվել է մեղադրանքից) կամ 3-րդ կետով (տուժողը և նրա ներկայացուցիչն առանց հարգելի պատճառի երկու անգամ չեն ներկայացել դատական նիստին) քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու դեպքում դատարանը լուծում է նաև տուժողի գործողությունների հետևանքով մեղադրյալին պատճառված վնասի հատուցման հարցը: Պետք է նկատել, որ տուժողը կրում է ապացուցման պարտականություն ոչ միայն քրեական հայցը ներկայացնելիս, այլև հիմնական դատալսումների ժամանակ և այդ ընթացքում տուժողի կողմից ապացույցներ չներկայացնելու դեպքում վերջինիս փոխհատուցման սուբյեկտ ճանաչելու մասին թե՛ Օրենսգրիքը և թե՛ քաղաքացիական օրենսգրիքը լուծում են, իսկ ապացույցներ չներկայացնելը չի կարող նույնացվել անգործությամբ (լռության համատեքստում) 456-րդ

հողվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված մեղադրանքից հրաժարվելու իրավակարգավորման հետ: Ավելին՝ Օրենսգիրքը, թեև 457-րդ հողվածի համատեքստում տուժողի գործողությունները որպես վնասի պատճառ է դիտարկել, սակայն նույնիսկ այս դեպքում նրան ուղղակիորեն չի դիտարկել փոխհատուցման սուբյեկտ: Իսկ ապացույցներ չներկայացնելով մեղադրյալի համար անբարենպաստ հետևանքներ առաջացնելուն հարկ է անդրադառնալ «ապացուցման պարտականություն» և «ապացուցման բեռ» հասկացությունների միջոցով: Դատավարագիտության մեջ «բեռ» եզրույթն օգտագործվում է՝ ելնելով այն նկատառումներից, որ թե՛ փաստեր վկայակոչելը և թե՛ ապացույցներ ներկայացնելը դասական իմաստով կողմի դատավարական պարտականություն չէ: Քննարկվող դատավարական գործողությունները կատարելու հնարավորությունը դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական իրավունք: Բայց քանի որ այդ դատավարական իրավունքից չօգտվելը, այն պատշաճորեն չիրականացնելը կարող է առաջացնել նյութաիրավական և դատավարական բնույթի անբարենպաստ հետևանքներ, դատավարագիտության և դատավարական օրենսդրության մեջ քննարկվող իրավունքի իրականացումը դիտարկվում է որպես որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով ապահովված անհրաժեշտություն՝ բեռ, որը պայմանականորեն կոչվում է նաև պարտականություն¹: Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հողվածի 1-ին մասի կարգավորման՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Հարց է առաջանում, արդյո՞ք ապացույցների անբավարարությամբ արդարացման դատավճիռ կայացվելու դեպքում Քաղ. օր.-ի 1058-րդ հողվածի

¹ Մեղրյան Ս.Գ., Ապացույցները և ապացուցումը ՀՀ քաղաքացիական դատավարությունում, էջ 33: Թեև մեջբերված աշխատությունը վերաբերում է քաղաքացիական դատավարությանը, սակայն գտնում ենք, որ մասնավոր մեղադրանքով վարույթն ունի որոշակի ընդհանրություններ քաղ. դատ. կարգավորումների հետ, ուստի նման մեկնաբանումը կարող է նաև վերաբերել լինել քր. դատ. շրջանակներում գործող մասնավոր մեղադրանքով վարույթին:

տրամաբանությամբ կարող է փոխհատուցումը դրվել տուժողի վրա, թե՛ նույն օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությամբ այդպիսիսի վնասի կրողը լինելու է ՀՀ-ն՝ անկախ վարույթ իրականացնող մարմնի մեղքից: «Ապացուցման պարտականություն» և «ապացուցման բեռ» հասկացությունների վերևում ներկայացված մեկնաբանման պայմաններում դժվարանում է ապացույցներ չներկայացնելու հիմքով տուժողին ճանաչել փոխհատուցման պարտականության կրող: Այս հոդվածների համակողմանի վերլուծության նպատակն է հասկանալ՝ արդյո՞ք մեղադրյալի փոխհատուցման իրավունքը և առանձին դեպքերում այդ փոխհատուցումը տուժողի միջոցների հաշվին իրականացնելու իրավաբանական հնարավորությունը կարող են վկայել քրեական հայցի ապացուցման շեմն իջեցնելու օգտին՝ տուժողի համար ստեղծելով հնարավորություն հիմնական դատալսումների ժամանակ դատարանի օգնությամբ հավաքել և ներկայացնել ապացույցներ:

Հաջորդ գործոնը դատարանների սուբյեկտիվ վերաբերմունքն է: Կանխակալ վերաբերմունք չունենալով դեռևս գոյություն չունեցող մասնավոր մեղադրանքով վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների գործունեության պատշաճության վերաբերյալ՝ այդուհանդերձ հարկ ենք համարում նշել, որ հատկապես վարույթով ծանրաբեռնված լինելու դեպքում նրանք հակված կլինեն քրեական հայցին ավելի խիստ մոտենալ և մերժել դրանք ընդունելը՝ պատճառաբանելով մեղադրանքը հիմնավորող նյութերի ոչ բավարարությունը՝ մանավանդ սկզբնական շրջանում, երբ դեռ ձևավորված չի լինի իրավակիրառ պրակտիկա: Այսպիսի հանգամանքները վկայում են, որ պրակտիկայում քրեական հայցի մեղադրանքը հիմնավորող նյութերին կարող է ներկայացվել ապացուցողական բարձր շեմ:

2. Օրենսդրական կարգավորումներ և հանգամանքներ, որոնք հիմնավորում են, որ քրեական հայցին պետք է ներկայացնել ապացուցողական ցածր շեմ.

Քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածը նախատեսում է հանցագործությունների այնպիսի խառը շրջանակ, որոնք էականորեն բարդացնում են տուժողի կողմից փաստական տվյալներ հավաքելու գործընթացն առհասարակ, առավել ևս, երբ քրեական վարույթ դեռ նախաձեռնված չէ:

Քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում անձին տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելու համար:

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

Տեղեկատվության ազատության սահմանափակման առանձին իրավակարգավորումներ վկայում են, որ մեջբերված երաշխիքները բավարար չեն տուժողի կողմից անխոչընդոտ տեղեկություններ ձեռք բերելու համար, նույնիսկ դատարաններն առանց քրեական վարույթ սկսելու որոշման կայացման կաշկանդված կլինեն որոշակի տեղեկություններ ձեռք բերելու հարցում: Քննարկենք դրանցից որոշները:

Օրենսգրքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարույթի ընթացքում անձին վերաբերող և բժշկական (բացառությամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ այն ստանալու մասին տվյալի), նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող տեղեկությունները կարող են հավաքվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Արտոնագրերի մասին ՀՀ օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մանրակրկիտ կարգավորված են քաղաքացիներին, այդ թվում՝ երրորդ անձանց տեղեկությունների տրամադրման կարգը արտոնագրային

ՍԱՀՄԱՆԱՂՐՈՎՎԱԿԱՆ ՂԱՏՎՈՒՄ 2(110)2023

իրավունքների խախտման հանցակազմով, սակայն նույն օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է հայտերի գործավարության գաղտնիությունը, որի 4-րդ մասի համաձայն գաղտնի համարվող նյութերը ծանոթացման համար դառնում են մատչելի միայն հայտատուի գրավոր համաձայնությամբ կամ թույլտվությամբ, իսկ քրեական վարույթներով նախաքննություն իրականացնող մարմինների և դատարանի համար՝ օրենքով սահմանված կարգով: Այսինքն առանձին դեպքերում հայտատու չհանդիսացող տուժողը հնարավորություն չունի նման տեղեկություն ներկայացնել դատարան քրեական հայցի շրջանակներում:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազի կամ դատարանի, կամ քննիչի՝ օրենքի համաձայն տրված գրավոր պահանջով նոտարը նոտարական կամ իր կողմից իրականացվող այլ գործողությունների վերաբերյալ տեղեկանքներ, նոտարական գործից քաղվածքներ, պատճեններ կամ բնօրինակներ է տալիս նախաքննության կամ դատաքննության մեջ գտնվող քրեական վարույթների և քաղաքացիական գործերի առնչությամբ, ինչպես նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

Այսպիսի կարգավորումները ոչ միայն բարդացնում են տուժողի կողմից քրեական հայցի ներկայացման համար փաստական տվյալներ հավաքելու գործընթացը, այլև նույնիսկ դատաքննության փուլում են տուժողին զրկում նման տեղեկություններ հավաքելու հնարավորությունից՝ նրան վերածելով դատաքննության փուլում ապացուցման ձևական սուբյեկտի բոլոր այն դեպքերում, երբ ապացույց հանդիսացող տվյալները մեջբերված երաշխիքների տիրույթում են: Փաստենք, որ խնդիրն այս իրավակարգավորումների թերի լինելը չէ, սակայն այդ սահմանափակումները հանգեցնում են նրան, որ տուժողը կարող է ավելի շատ դեպքի առկայությունը, այլ ոչ թե անձի մեղավորությունը հավաստող տվյալներ հավաքել: Մինչդեռ

ըստ օրենսդրական ձևակերպման՝ նա պետք է մեղադրանքը հիմնավորող նյութեր ներկայացնի:

Տուժողի ապացուցման պարտականությունը խնդրահարույց է ոչ միայն ներկայացված տեղեկատվական սահմանափակումների հաշվին, այլև քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված որոշ հանցագործությունների բնույթով պայմանավորված:

Առանձնակի ուշադրության են արժանի ֆիզիկական և հոգեկան ներգործության հանցակազմերը: Հոգեկան ներգործությունը, որպես սպառնալիքի դրսևորմամբ կատարվող հանցագործություն, հետք չի պարունակում և եթե վկաներ էլ չկան, նույնիսկ պրոֆեսիոնալ իրավաբանների համար է դառնում ոչ ապացուցելի: Ֆիզիկական ներգործությունը, եթե մարմնական վնասվածքի հատկանիշներ չի պարունակում, դարձյալ օբյեկտիվորեն դառնում է դժվար կամ ոչ ապացուցելի, եթե հետքեր չեն մնացել կամ վկաներ չկան¹: Մի կողմից՝ առանց մեղադրանքը հիմնավորող տվյալների վարույթ սկսելը հանգեցնում է պետական միջոցների անհարկի վատնման, որի արդյունքում, եթե նույնիսկ դատաքննություն սկսվի, ապացույցների անբավարարությամբ արդարացման դատավճիռ կարող է կայացվել՝ հանգեցնելով մեղադրյալի փոխհատուցման հարցին, մյուս կողմից՝ իրավապահ մարմինների կողմից հանցագործության դեպքով արձագանքի բացակայությունը կառաջացնի ամենաթողություն, որը կարող է նպաստել ընտանեկան բռնության աճին, անչափա-հասներին (և ոչ միայն) բուլիինգի ենթարկելուն, գողության, կողոպուտի, խարդախության հանցակազմերի պարբերաբար կրկնությանը:

¹ Ունենալով ապացուցման պարտականություն և չլինելով վարույթի պրոֆեսիոնալ մասնակից՝ մասնավորապես այնպիսի հանցագործությունների ապացուցման համար, որոնք առերևույթ հետքեր չեն պարունակում (ֆիզիկական և հոգեկան ներգործություն, խարդախություն և այլն), տուժողները հաճախ կղիմեն գաղտնի ծայնագրման և տեսագրման մեթոդին, ինչը այդպիսի ապացույցների թույլատրելիության իրավական պրակտիկայի ձևավորման վրա կունենա լուրջ ազդեցություն: Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսագրության կամ ծայնագրության թույլատրելիության մասին մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան Գ., Ղամբարյան Ա., Մարգարյան Ա.**, Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսագրության կամ ծայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարություններում: Երևան 2017:

ՍԱԿՄԱՆԱՎՈՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 2(110)2023

Այսպիսի վտանգներից խուսափելու նպատակ է հետապնդում Օրենսագրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով և քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Թեև դատարաններն իրավասու են քրեական վարույթն սկսելը մերժել, եթե քրեական հայցում նկարագրված փաստական հանգամանքների կապակցությամբ քրեական հետապնդումը կարող է իրականացվել միայն հանրային կարգով, սակայն նկարագրված դեպքերն ավելի շուտ մասնավոր են և հանրային կարգով քննության առարկա կարող են դառնալ որպես բացառություն: Արդյո՞ք առանց փաստական տվյալների ներկայացված քրեական հայցին դատարանը կարող է տալ ընտանեկան բռնության կամ անօգնական վիճակի վերաբերյալ գնահատական: Ոստիկանությունը, քննչական մարմինները և դատախազությունը որպես քաղաքացիների հետ անմիջականորեն հաղորդակցվող կառույցներ, կարող են իրենց բազաներում առկա հաշվառումների, նախկինում նույն անձանց կողմից նմանատիպ դեպքերի առկայության, դատվածության տեղեկանքի հիմքով ներքին համոզմունք ձևավորել ընտանեկան բռնության հատկանիշների մասին, ինչը չի կարելի ասել դատարանների մասին, որոնց շփումը քաղաքացիների հետ քրեական հայցի ներկայացման փուլում կրում է բացառապես փաստաթղթային բնույթ: Առանց փաստական տվյալների հնարավոր չէ ընտանիքում բռնության կամ անձանց անօգնական վիճակի մասին համոզմունք ձևավորել և միաժամանակ դատարանների վրա դրված չէ պարտականություն քրեական հայցը մերժելու կամ քրեական վարույթ սկսելու որոշումները

կայացնելիս կատարել որոշակի ստուգողական գործողություններ. օրինակ կատարել հարցումներ անձի դատվածության, նախկինում նման դեպքերի առկայության, իբրև անհաշտ ընտանիք հաշվառված լինելու վերաբերյալ, որոնք ապացույցների բացակայությամբ ներկայացված քրեական հայցերը կարող էին դարձնել բավարար քրեական վարույթ սկսելու համար: Ստացվում է, որ ֆիզիկական և հոգեկան ներգործության հանցակազմերին վերաբերող քրեական հայցերը կարող են մերժվել փաստական տվյալների բացակայության պատճառով՝ իրենց մեջ կրելով վերը թվարկված վտանգները բոլոր այն դեպքերում, երբ տուժողները միանգամից դատարան են դիմել, ոչ թե իրավապահ այլ մարմիններ: Սակայն, եթե ֆիզիկական կամ հոգեկան ներգործության դեպքերը ընտանքիում կատարվելու դեպքում քաղաքացիները կարող են պարզապես ահազանգել ոստիկանություն և սա բավարար կլինի Օրենսգրքի 11-րդ հոդվածով սահմանված դատախազի հայեցողական լիազորությունը կիրառելու համար՝ հաշվի առնելով, որ Հայաստանում, նաև միջազգային վերահսկողությամբ պայմանավորված, ընտանեկան բռնության հանցակազմերը պետական և հասարակական տարբեր կառույցների ուշադրության կենտրոնում են արդեն տարիներ շարունակ, ապա ոչ ընտանեկան բնույթ կրող փոխհարաբերություններում, երբ դեռ ձևավորված չէ անձի անօգնական վիճակին գնահատական տալու իրավական պրակտիկա, մի շարք դեպքեր կարող են անտեսվել իրավապահ մարմինների կողմից: Դատարանները փաստական տվյալների բացակայությամբ կմերժեն գործերը վարույթ ընդունել, իսկ ոստիկանությունն ու քննչական կոմիտեն հղում կկատարեն դեպքի մասնավոր գանգատի տիրույթում լինելու իրավակարգավորման վրա:

Վերոթվարկյալ հանգամանքները տպավորություն են ստեղծում, որ պետությունը կարծես ձեռքերը լվացել է մասնավոր վարույթի գործերից՝ տուժողին թողնելով իր իրավաբանական հնարավորություններին անհամաչափ ապացուցման բեռի հետ միայնակ: Եվ սա այն դեպքում, որ

Եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ որքան էլ մասնավոր մեղադրանքի վարույթների կազմակերպումը չի հակասում կոնվենցիային, այդուհանդերձ տուժողների վրա չի կարող դրվել ապացուցման չափազանց ծանր բեռ¹:

Դատական համակարգի մատչելիության² առկա խնդիրները, մեղադրյալի կարգավիճակի ընկալումներն այլ իրավակարգավորումներում, տուժողի ոչ բոլոր դեպքերում փոխհատուցման սուբյեկտ ճանաչվելու հանգամանքները, տեղեկատվության տրամադրման սահմանափակումները կարող են հանգեցնել մասնավոր մեղադրանքի գործերի պետական մակարդակով «օրինական» անտեսման վտանգին: Այսպիսի իրավակարգավորումները վկայում են քրեական հայցի համար ապացուցման առավել ցածր շեմ սահմանելու նպատակահարմարության մասին, միաժամանակ ակներև դարձնում տուժողների և մեղադրյալների՝ միմյանց փոխբացառող շահերը, որոնք մասնավոր մեղադրանքի վարույթի ընդունված կարգավորումների պայմաններում a fortiori հիմնավոր են դարձնում սույն հոդվածով ուշադրությունը գլխավորապես քրեական հայցին ներկայացվող պահանջներին սևեռելը:

Ինչպես վերևում նկատեցինք, «Մեղադրանքը հիմնավորող նյութեր» ձևակերպումը և քրեական վարույթ սկսելու որոշմամբ անձի՝ մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելու հանգամանքը տպավորություն են ստեղծում, որ այն պետք է հիմնավորապես արտացոլի ենթադրյալ հանցանք կատարած անձի կապը հանցագործության հետ: Սակայն չպետք է անտեսել այն դեպքերը, երբ այդ տվյալները հավաստում են դեպքի առկայությունը, ոչ թե անձի կապը հանցագործության փաստի հետ, իսկ նրան քրեական հայցում մատնանշելը տուժողի համոզմունքն է միայն:

¹ Barsova v. Russia գործով 22.10.2019 թ. վճիռը, գանգատ թիվ 20289/10, կետեր 33-34: Մեջբերումն ըստ Ա. Ղազարյանի նշված հոդվածի:

² Մատչելիություն ասելով այստեղ նկատի ունենք տարածքային, ֆինանսական, վստահության իմաստով հանրային ընկալման, քրեական հայցին դատարանի կողմից տրվող հնարավոր սուբյեկտիվ գնահատականի ասպեկտները:

Օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնավոր գանձատի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ տուժողին հայտնի չէ ենթադրյալ հանցանքը կատարած անձը: Ենթադրյալ հանցանք կատարած անձի հայտնի չլինելը չպետք է տառացի մեկնաբանել: Պայմանավորված Քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածում ներառված հանցակազմերի առանձնահատկություններով՝ այն կարող է յուրաքանչյուր անգամ տարբեր մեկնաբանության ենթարկվել: Առանձին դեպքերում տուժողի կողմից կարող է բավարար լինել դեպքի առկայությունը հիմնավորող փաստական տվյալների ներկայացումը, եթե նույնիսկ անձի մեղավորության վերաբերյալ փաստական տվյալներ չի ներկայացվում, սակայն հաստատապես անձը մատնանշվում է որպես ենթադրյալ հանցանք կատարողի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ տուժողն ունի որոշակի կասկածներ, սակայն ինքն էլ վստահ չէ՝ ով է արարքը կատարողը, ապա իրավապահ մարմինները չպետք է ձևական իմաստով հղում կատարեն 173-րդ հոդվածին, որում նշվում է ենթադրյալ հանցանք կատարած անձի անհայտ լինելը և մերժեն վարույթ նախաձեռնելը: Այսինքն տուժողի կասկածների դեպքում ոչ թե պետք է նրան ուղղորդել դեպի մասնավոր դատարան, այլ այդպիսի կասկածներին վերաբերվել որպես քննչական վարկածի և աշխատել այդ ուղղությամբ: Իսկ երբ տուժողը ներկայացրել է դեպքը հիմնավորող փաստական տվյալներ և հաստատապես մատնանշում է անձին որպես ենթադրյալ հանցանք կատարողի, թեև այդ առթիվ բավարար տվյալներ չի ներկայացրել, ապա դատարանը կարող է քրեական վարույթ սկսելու մասին որոշում կայացնել: Օրինակ՝ մարդուն սեռավարակով կամ իմունային անբավարարության վիրուսով վարակելու դեպքերում տուժողը հստակ կարող է իմանալ ենթադրյալ հանցանք կատարած անձին, սակայն չունենալով բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններ ձեռք բերելու հնարավորություն՝ չի կարող ձեռք բերել մեղադրանքը հիմնավորող նյութ, հետևաբար, միայն դեպքի

առկայությունը՝ տվյալ դեպքում իր վարակված լինելը հիմնավորելը պետք է բավարար լինի քրեական վարույթ սկսելու համար: Հանցակազմի տեսակով պայմանավորված՝ տարբերակված մոտեցում չցուցաբերելու դեպքում բոլոր հանցակազմերը կատարողի անհայտ լինելու հիմնավորմամբ սկզբում քննության առարկա կդարձվեն նախաքննական մարմնում, նոր կփոխանցվեն տուժողին մասնավոր դատարան դիմելու համար, ինչը կիմաստագրկի մասնավոր վարույթի նոր մոդելի ներդրումն ընդհանրապես:

Մասնավոր մեղադրանքի վարույթով դիսպոզիտիվության տարրերի ուժեղացումը, քրեական հայցը տուժողի կողմից տնօրինելու իրավասությունը, տուժողի համար ապացուցման պարտականության սահմանումը, վարույթով նախաքննության բացակայությունը ստեղծում են որոշ ընդհանրություններ քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործերի ընթացակարգերի հետ: Թեև այս վարույթները միմյանցից սկզբունքորեն տարբերվում են իրենց կողմից հետապնդվող նպատակներով, առաջացնող հետևանքներով և այլն, սակայն, ինչպես ցույց կտանք հետագա շարադրանքում, ապացուցման գործընթացին վերաբերող ընթացակարգերը կարող են ունենալ ընդհանրություններ: Այդ ընդհանրություններն ընդգծելու համար հարկ է համեմատական տանել հայցադիմումի՝ իբրև քաղաքացիական դատավարության մեկնարկի, քրեական հայցի՝ իբրև մասնավոր քրեական վարույթի մեկնարկի և հաղորդման՝ իբրև հանրային քրեական հետապնդման կարգով վարույթ նախաձեռնելու մեկնարկի միջև:

Համաձայն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական: ՀՀ կառավարության 2017 թ.-ի

նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական վարույթ նախաձեռնելու համար պարտադիր պայման է աղբյուրի բացահայտումը, արարքի նկարագրությունը, սակայն ոչ դեպքի հանգամանքները հիմնավորող նյութերի ներկայացումը: Այսինքն՝ հանցագործության դեպքի ամենապարզ շարադրանքը բավարար է քրեական վարույթ նախաձեռնելու համար, ինչը տրամաբանական է թվում, քանի որ այն միայն ազդարարում է քրեական վարույթ նախաձեռնելու մեկնարկ և ինքնին հիմք չէ հանրային քրեական հետապնդում հարուցելու համար:

Քաղաքացիական դատավարությունում հայցադիմումին ներկայացվող պահանջները լինում են պարտադիր և ոչ պարտադիր: Համաձայն Քաղ. դատ. օր.-ի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի՝ հայցադիմումում պարտադիր նշվում են այն փաստերը, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները, նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը սահմանում է՝ հայցադիմումում կարող են նշվել այն ապացույցները, որոնք հաստատում են հայցի հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված: Այսպիսով՝ Քաղ. դատ. օր-ը հստակ տարանջատում է դնում փաստերի և ապացույցների միջև և ներկայացման համար պարտադիր են հայցապահանջը հիմնավորող փաստերը, ոչ թե ապացույցները: Նույն Օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապացույցները դատարան են ներկայացվում արդեն դատաքննության փուլում:

Դատական ապացուցումն առաջին հերթին ենթադրում է ոչ թե որոշակի թեզի հիմնավորում, այլ դրա առաջադրում¹:

Դատավարական օրենսդրությունը հայցով (դիմումով) դատարան դիմող և այդ հայցից (դիմումից) պաշտպանվող անձանց վրա նախ դնում է

¹ Баулин О.В. Время доказывания при разбирательстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. - М., 2005, էջ 149: Մեջբերումն ըստ՝ Մեղրյան Ա.Գ., Ապացույցները և ապացուցումը ՀՀ քաղաքացիական դատավարությունում, էջ 31:

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԾՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(110)2023

իրենց պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստեր դնելու պարտականություն, որը դատավարագիտության մեջ հաճախ կոչվում է հաստատման բեռ, իսկ ապա՝ այդ փաստերն ապացուցելու բեռ, որն անվանվում է նաև ապացուցման պարտականություն:

Պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստեր դնելու պարտականությունը հարկ է հստակորեն սահմանազատել ապացույցներ ներկայացնելու (ապացուցելու) պարտականությունից: Ապացուցողական գործունեության մեջ փաստի վկայակոչմամբ առաջադրվում է ապացուցման ենթակա թեզ, իսկ ապացույցի ներկայացմամբ իրականացվում է այդ թեզի հիմնավորումը (փաստի ապացուցմանն ուղղված գործողությունը)¹:

Քանի որ «Մեղադրանքը հիմնավորող նյութեր» ձևակերպումը մեկնաբանված չէ, իսկ մեջբերված իրավակարգավորումներն ակնհայտորեն ցույց էին տալիս տուժողի սահմանափակ իրավունքները փաստական տվյալներ հավաքելիս, գտնում ենք, որ մասնավոր մեղադրանքի վարույթով իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա քաղաքացիական դատավարության տրամաբանությամբ: Այսինքն՝ քրեական հայցով առաջ քաշվի ապացուցման ենթակա թեզը, ապա դատաքննության փուլում սկսվի բուն ապացուցման գործընթացը: Օրինակ՝ երբ տուժողը քրեական հայցում վկայակոչում է մի փաստ, որը նրան տրամադրման ենթակա չէ օրենքի ուժով, ապա դատարանը պետք է քրեական վարույթ սկսի ոչ թե այդ փաստական տվյալի առկայության, այլ քրեական հայցում այդ փաստի մասին վկայակոչման պայմաններում ու ոչ միայն այն դեպքում, երբ այդպիսի տվյալները անձի մեղավորության մասին են վկայում, այլև այն դեպքերում, երբ դրանք դեպքի հաստատման միջոց են:

Քրեական հայցի համար ապացուցման առավել ցածր շեմ նախատեսելու այս ճանապարհը կարող է քննադատության արժանանալ հայտնի հիմնավորմամբ, որ անձը ձեռք է բերում մեղադրյալի

¹ Մեղրյան Ս.Գ., Նույն աշխատությունը, էջեր 32-33:

կարգավիճակ քրեական հայցի հիման վրա, հետևաբար այն ավելի փաստարկված պետք է լինի: Բացի այդ՝ կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ տուժողը ներկայացնում է գործի հանգամանքները՝ հայտնելով, որ մեղադրանքը հիմնավորող տվյալները կներկայացվեն դատաքննության փուլում, քանի որ նրա նպատակը դատաքննության մեկնարկն ազդարարելն է՝ հուսալով, որ ապացուցումը պետք է կատարի դատարանը և քրեական հայցում վկայակոչած տվյալները չի ներկայացնում, թեև կրում է ապացուցման պարտականություն: Ինչպես նկատեցինք վերևում, ապացույցներ չներկայացնելու հիմքով տուժողը հազիվ թե փոխհատուցման սուբյեկտ ճանաչվի, ստացվում է՝ այս դաշտում կարծես հակակշիռ չունենք: Ուստի անհրաժեշտ է գտնել այնպիսի լուծում, որի արդյունքում տուժողի ապացուցման պարտականությունը չի վերածվի ձևականության, միաժամանակ նրա վրա չի դրվի իր իրավաբանական հնարավորությունների հետ անհամատեղելի ապացուցման բեռ, իսկ անձինք անհարկի ձեռք չեն բերի մեղադրյալի կարգավիճակ:

Հարցի լուծման հետաքրքիր մոտեցում է ցուցաբերվել Կանադայի Օնտարիո նահանգի արդարադատության դատարանի կողմից մշակված ուղեցույցում¹, որում դիմումին ներկայացվող պահանջները գրեթե նույնանում են մեր օրենսդրի պահանջներին և դարձյալ պահանջվում է ենթադրյալ հանցանքի վերաբերյալ բավարար մանրամասներ ներկայացնել, սակայն պարզաբանված չէ, թե ինչ ասել է «բավարար մանրամասներ»: Այս մասին կարող ենք պատկերացում կազմել ուղեցույցի նախնական դատախոսների բաժինն ուսումնասիրելիս, որում մասնավորապես նշվում է. նախնական դատախոսների ժամանակ մեղադրյալը չի ծանուցվում դատական նիստի մասին և դատարանը որոշելու է, թե արդյոք կա *prima facie* դեպք, ինչը նշանակում է, որ պետք է լինեն որոշ ապացույցներ հանցագործության էական տարրերի վերաբերյալ ոչ թե

¹ <https://www.ontariocourts.ca/ocj/files/guides/guide-private-prosecution-EN.pdf>

Վերջին դիտում՝ 01.05.2023 թ.:

դիմումը դատարան ներկայացնելիս, այլ նախնական դատական լուսմների ժամանակ: Եթե դատարանը նախնական լուսմների ժամանակ որոշում է գործին ընթացք չտալ, ապա մեղադրյալը չի ծանուցվում դատարան ներկայանալու վերաբերյալ, իսկ տեղեկատվությունը համարվում է երբեք դատարան չտրամադրված: Այն, որ դատարանը նախնական դատալուսմների ժամանակ է որոշում հետագա դատական լուսմներին մեղադրյալին կանչել, թե ոչ, ցույց է տալիս, որ հանցագործության մասին վկայող լուրջ փաստական տվյալների ներկայացման վերաբերյալ տուժողի վրա մեծ բեռ դրված չէ: Բացի այդ, եթե նախնական լուսմների ժամանակ որոշվում է գործին ընթացք չտալ և տեղեկությունները համարվում են երբեք դատարան չտրամադրված, սա նշանակում է, որ քրեական հայցը վարույթ ընդունելիս անձին մեղադրյալի կարգավիճակ տալն ըստ Կանադայի Օնտարիո նահանգի օրենսդրության կրում է ձևական բնույթ և եթե մեղադրյալն իր կարգավիճակով պայմանավորված որևէ զրկանք չի կրել, նույնիսկ տեղեկությունները համարվում են երբեք դատարան չտրամադրված, ապա քրեական պատասխանատվություն դեռ առկա չէ, հետևաբար այդ համատեքստում փոխհատուցման խնդիր նույնիսկ չի, որի բերումով դատարանները կաշկանդված չեն լինի փաստական տվյալների անբավարարությամբ պայմանավորված քրեական հայցը վարույթ ընդունելիս: Նման կարգավորումը հատկապես կարևոր է ընտանիքում բռնության, անձին պարբերաբար ճնշելու վտանգների մասին դատավորի իրազեկ լինելու մասով, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, դատարանները քաղաքացիների հետ կենդանի հաղորդակցություն չունեն, հետևաբար այսպիսի իրավակարգավորումը կնպաստի, որ դատարանները տեսնեն տուժողներին, նրանց նախնական դատալուսմների ժամանակ հարցեր տան, ինչն էապես կարող է փոխել գործի դատավարական պատկերը, երբ նույնիսկ ի սկզբանե մեղադրանքը հիմնավորող նյութեր պատշաճ կերպով ներկայացված չեն:

Այսպիսի կարգավորումը որևէ կերպ չի հակասում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերին, քանի որ ի տարբերություն հանրային քրեական հետապնդման գործերով նախաքննության, որտեղ նույնիսկ մրցակցության սկզբունքն է որոշակիորեն սահմանափակված, մասնավոր գանգատով դատաքննության ժամանակ դատարանը չունի այնպիսի լիազորություններ, որոնք կարող են հանգեցնել մրցակցության սկզբունքի խաթարման կամ մեղադրյալին զրկեն իր պաշտպանությունը ժամանակին կազմակերպելու հնարավորությունից: Իսկ եթե նախնական դատալսումների ժամանակ որոշվում է գործը շարունակել, ապա հենց այդ պահից էլ պետք է մեղադրյալին անհապաղ իրազեկել մեղադրանքի մասին՝ կոնվենցիայով երաշխավորված զենքերի հավասարության սկզբունքը չխախտելու նկատառումից ելնելով:

Մասնավոր մեղադրանքի վարույթով մեկ այլ լուծում կարող էր լինել քրեական վարույթ սկսելու որոշման կայացմամբ՝ մինչև դատալսումներն սկսելը անձին ոչ թե մեղադրյալի, այլ վկայի կարգավիճակով դատաքննությանը ներգրավելը, և քանի որ ի դեմս քրեական հայցի գործունենք մեղադրանքի հետ, վկայի կարգավիճակում գտնվող անձը, որը կարող է դատավարության հաջորդ փուլերում ձեռք բերել մեղադրյալի կարգավիճակ, պետք է պարտադիր իրազեկված լինի մեղադրանքի բնույթի, ինքն իր դեմ ցուցմունքներ չտալու իրավունքի մասին՝ ըստ էության օգտվելով մեղադրյալին բնորոշ պաշտպանության բոլոր միջոցներից: Գործող քրեական դատավարության մոդելում սա ընդունելի է, քանի որ չունենալով կասկածյալի դատավարական կարգավիճակ, միաժամանակ քրեական հետապնդում հարուցելու բավարար հիմքերի բացակայության պայմաններում պրակտիկայում հանցանքի մեջ կասկածվող անձինք հարցաքննության են ենթարկվում վկայի կարգավիճակով՝ պարտադիր իրազեկելով մեղադրյալի իրավունքների և պարտականությունների մասին: Մեղադրյալի իրավունքների և պարտա-

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԾՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ 2(110)2023

կանությունների մասին իրազեկումը անձին հնարավորություն է տալիս Կոնվենցիայով երաշխավորված մեղադրանքի մասին իրազեկ լինելու և իր պաշտպանությունը կազմակերպելու համար, միաժամանակ վկայի կարգավիճակ ունենալը բարոյական տեսանկյունից կարևոր է, քանի որ անձը, գիտակցելով հնարավոր քրեական հետապնդման մասին, այդուհանդերձ վկայի կարգավիճակում դեռևս այդպիսի հետապնդման մեջ չէ, բացի այդ, հասարակության արձագանքն է այլ, երբ անձը դատարան է կանչվել ոչ թե մեղադրյալի, այլ վկայի կարգավիճակով, հետևաբար չի կարող բողոքել, որ իր պատիվն ու բարի համբավը նման որոշմամբ խաթարված է: Այլ կերպ՝ անձն ունի մեղադրյալ-վկայի կարգավիճակ և որպես մեղադրյալ օգտվում է մեղադրյալին բնորոշ պաշտպանության միջոցներից՝ այդ թվում հանրային պաշտպան ունենալու իրավունքից, իսկ որպես վկա ապահովված են նրա պատիվն ու բարի համբավը: Այսպիսի առաջարկի խնդրահարույց կողմն այն է, որ հետո դատարանը պետք է հանրային քրեական հետապնդում հարուցելու առանձին որոշում կայացնի: Ինչպես վերևում նշեցինք, դա կարող է հակասահմանադրական լինել, սակայն եթե առաջնորդվում ենք հեղինակների այն մեկնաբանությամբ, որ դատարանին առանձին որոշումներ կայացնելու ձևական քաջքուկից զերծ պահելու միտում ուներ անձին քրեական վարույթ սկսելու որոշման կայացմամբ մեղադրյալի կարգավիճակ տալը, ապա նման կարգավորումը խնդրահարույց չէ և դատարանն ազատորեն նախնական դատալսումների ժամանակ կարող է անձին մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալ:

Բացի մեղադրանքը հիմնավորող նյութերից, Օրենսգրքի 451-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հայցը պետք է պարունակի նաև այն անձանց անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրը, որոնց դեմ ներկայացվել է քրեական հայցը կամ որոնք պետք է կանչվեն դատական նիստին:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(110)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Գտնում ենք, որ քրեական հայցում անձի բնակության կամ հաշվառման հասցեի պարտադիր նշման նպատակը նրա պատշաճ ծանուցումն ապահովելն է: Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե անձն առաջին անգամ է ծանուցվում, ապա թղթային ծանուցագիրը հանձնվում է նրա մշտական բնակության վայրի կամ հաշվառման հասցեով, իսկ եթե այն հայտնի չէ, ապա աշխատանքի, ուսման կամ ծառայության վայրի հասցեով: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային ծանուցագիրն ուղարկվում է ծանուցվող անձի պաշտոնական կամ նրա կողմից գրավոր հայտնված էլեկտրոնային փոստի հասցեով կամ հեռախոսահամարով: Ստացվում է, որ օրենսդիրը սահմանել է ծանուցման ավելի լայն եղանակներ, սակայն քրեական հայցում այդ նպատակի իրացման համար սահմանվել են ավելի նեղ ճանապարհներ: Բացի այդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը սահմանափակվում է, եթե խախտվում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, իսկ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը, ինչը ենթադրում է, որ անձի բնակության կամ հաշվառման վայրի հասցեն անձնական տվյալների պաշտպանության տիրույթում է, և եթե տուժողն այդ մասին չունի տեղեկություն, ապա պաշտոնական որևէ եղանակով չի կարող այն ձեռք բերել: Հետևաբար, քրեական հայցում միայն բնակության կամ հաշվառման հասցեն իբրև այն վարույթ ընդունելու պարտադիր պայման նշելը նույնպես տուժողի համար ստեղծում է ոչ բարենպաստ իրավավիճակ: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Օրենսգրքի 451-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերն անհրաժեշտ է լրացնել և

վերածնակերպել հետևյալ կերպ. «Անձի պատշաճ ծանուցումն ապահովելու համար բավարար տվյալներ. բնակության կամ հաշվառման հասցե, եթե այն հայտնի չէ, աշխատավայրի, ուսման կամ ծառայության վայրի հասցե, ինչպես նաև պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցե կամ հեռախոսահամար»: Նկատենք, որ 151-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ոչ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով կամ հեռախոսահամարով ծանուցում թույլատրվում է ծանուցվողի կողմից այն գրավոր հայտնելու դեպքում, հետևաբար տուժողի տրամադրած ոչ պաշտոնական հեռախոսահամարն ու էլեկտրոնային փոստի հասցեն բավարար չեն անձի պատշաճ ծանուցումն ապահովելու համար, քանի որ ծանուցվողի կողմից չեն տրամադրվել:

Քրեական հայցին ներկայացվող պահանջները թեև ներառում են վկաների և մեղադրյալի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, սակայն օրենսդրական կարգավորման ենթարկված չէ այն հարցը, թե ով է կրելու վկաներին կամ մեղադրյալին հայտնաբերելու և դատարան ներկայացնելու պարտականությունը: Օրենքի տառացի մեկնաբանությունը ենթադրում է, որ տուժողն է ապացուցման պարտականության կրողը և նա էլ պետք է ապահովի նրանց դատարան ներկայացնելու պարտականություն, նրանց կրած վնասների փոխհատուցում այն դեպքերում, երբ դա մեղադրյալի միջոցների հաշվին չի արվում: Սակայն հաշվի առնելով հայ հասարակության անվստահությունը դեպի իրավապահ մարմինները, նրանց հետ առնչվելու ցանկության բացակայությունը, սոցիալական պատասխանատվության գիտակցության կրող չլինելը՝ շատ հաճախ թերևս հնարավոր չլինի այդ անձանց ներկայությունն ապահովել իրենց կամքով կամ տուժողի միջոցներով, ուստի այս բեռի կրողն էլ է լինելու դատարանը՝ ըստ անհրաժեշտի Օրենսգրքի 145-րդ հոդվածի ուժով դատարան հարկադրաբար ներկայացնելով:

Թեև հողվածի հիմնական առարկան քրեական հայցին ներկայացվող պահանջներն էին, սակայն մասնավոր գանգատի ինստիտուտն ունի նաև այլ խնդրահարույց կողմեր: Հպանցիկ անդրադառնանք դրանցից որոշներին:

Քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածը ներառում է այնպիսի հանցակազմեր, ինչպիսիք են գողությունը, խարդախությունը, կողոպուտը: Պարբերաբար հափշտակությամբ զբաղվողները հիմնականում կկատարեն այնպիսի հանցագործություններ, որոնք մասնավոր գանգատի տիրույթում են՝ յուրաքանչյուր անգամ հուսալով, որ չեն բռնվի, բռնվելու դեպքում էլ տուժողի հետ վնասի վերականգնման ակնկալիքով հաշտության համաձայնության կգան նախապես կամ դատարանում: Տուժողին այս իրավիճակը ձեռնտու է, քանի որ նրա խնդիրն է իրեն պատճառված վնասի վերականգնումը, այլ ոչ թե հանցագործին պատժելը, սակայն պետք է նկատել, որ պարբերաբար այդպիսի հանցանք կատարող անձինք չունեն գույք, սեփականություն, ֆինանսական միջոցներ և նրանց կողմից վնասի վերականգնումը նմանատիպ նոր հանցագործություն ծնելու նոր պատճառ է: Բացի այդ, օպերատիվ աշխատակիցները կկորցնեն այս հանցագործությունների դեմ պայքարելու շահագրգռությունը, երբ յուրաքանչյուր անգամ բացահայտված դեպքով պարզեն, որ տուժողները դատարան չեն դիմել: Այս իրավիճակի լուծում կարող է լինել պարբերաբար նույնաբնույթ հանցանք կատարող անձանց հայտնաբերելիս, անկախ տուժողի բողոքելու հանգամանքից, անձի նկատմամբ սկսել հանրային քրեական հետապնդում: Ասվածը հիմնավորենք հետևյալով. Քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածում առկա հանցակազմերը հիմնականում ներառում են նվազ վնասի հանգամանքով պայմանավորված հանցակազմերի ընտրություն, սակայն 172-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է սահմանում անզգուշությամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու, երկու կամ ավելի անձանց առողջությանն անզգուշությամբ ծանր վնաս պատճառելու հանցակազմի

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 2(110)2023

համար, վկայում է, որ օրենսդիրն առաջնորդվել է ոչ միայն վնասի նվազ լինելու, այլև վնաս պատճառողի հանրային վտանգավորության ցածր աստիճանով՝ անկախ վնասի ծանրությունից: Հակադարձ համեմատականությամբ կարևոր է նաև անձի բարձր հանրային վտանգավորությունը: Եթե նույնիսկ հափշտակության որևէ դրսևորում նվազ հետևանք ունի կոնկրետ մեկ տուժողի մասով, սակայն անձը պարբերաբար կատարում է նույնաբնույթ հանցագործություն, ապա բարձրանում է ենթադրյալ հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը: Հետևաբար, որպես բացառություն կարող է լինել նաև անձի հանրային բարձր վտանգավորությամբ պայմանավորված պարբերաբար կրկնվող նույնաբնույթ հանցագործությունների դեպքերում դատախազին հայեցողական լիազորություն վերապահել սկսելու հանրային քրեական հետապնդում՝ Օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնելով առաջարկին համապատասխան 3-րդ կետով:

Օրենսգրքի 452-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ քրեական վարույթ սկսելը մերժվում է, եթե քրեական հայցում նկարագրված փաստական հանգամանքների կապակցությամբ քրեական հետապնդումը կարող է իրականացվել միայն հանրային կարգով, իսկ 457-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հիմնական դատախազների արդյունքով պարզվում է, որ ապացուցված արարքի կապակցությամբ քրեական հետապնդումը կարող էր իրականացվել միայն հանրային կարգով, ապա դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ: Ինչպես նկատում ենք, 452-րդ հոդվածի կարգավորումը վերաբերում է քրեական հայցը ներկայացնելու սկզբնական պահին տրվող գնահատականին, իսկ 457-րդ հոդվածն առանձնացնում է ապացուցված արարքի վերաբերյալ մեղադրական դատավճիռ կայացնելու կարգավորումը: Բաց է մնում այն դեպքը, երբ մասնավոր մեղադրանքի վարույթի հիմնական դատախազների փուլում ապացուցվել է դեպքի հանրային լինելը, սակայն դեռ չի ապացուցվել անձի վերջնական

մեղավորությունը մեղադրական դատավճիռ կայացնելու համար, միաժամանակ անհրաժեշտ են կատարել այնպիսի քննչական գործողություններ, որոնց իրավասությունը դատարանը դատաքննության փուլում չունի: Գտնում ենք, որ սա օրենսդրական տեխնիկայի բաց է և դատարանները կաշկանդված պետք է չլինեն նման հանրային գործերն ուղարկել նախաքննական մարմին նախաքննություն կատարելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ մասնավոր վարույթի գործերով.

1. Քրեական հայցին չպետք է ներկայացվի ապացուցման բարձր շեմ, փոխարենը քաղաքացիական դատավարության օրինակով քրեական հայցով սկզբում պետք է առաջ քաշել ապացուցման ենթակա թեզը, ապա դատաքննության փուլում ներկայացնել մեղադրանքը հիմնավորող նյութերը: Միաժամանակ Կանադայի Օնտարիո նահանգի օրինակով անձին ճանաչել մեղադրյալ, սակայն չճանուցել այդ մասին և եթե նախնական դատալուծման ժամանակ պարզվի, որ մեղադրանքն անհիմն է, ապա գործը կարճել, իսկ մեղադրյալի մեղքը հիմնավորող տեղեկությունները համարել երբեք դատարան չտրամադրված: Ստացվում է՝ ունենալ նախնական դատական լուծման երկու փուլ: Առաջին փուլում լուծել 311-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու հարցը: Հաշվի առնելով, որ տուժողի երկու անգամ անընդմեջ դատական նիստին չներկայանալու կամ մեղադրանքից հրաժարվելու դեպքում վարույթը պետք է կարճել, ստացվում է, որ նաև նման հիմքերի առկայության դեպքում մեղադրյալն անհարկի դատարան չի կանչվի, միաժամանակ դատարանը հնարավորություն կունենա անձամբ առերեսվելու տուժողի հետ: Նախնական դատական լուծման հաջորդ փուլի ժամանակ նոր քննության առարկա դարձնել 311-րդ հոդվածի մյուս վերաբերելի կետերը:

2. Անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել ենթադրյալ հանցանք կատարած անձի անհայտ լինելու հանգամանքին: Երբ տուժողը

կասկածներ ունի, սակայն վստահ չէ և որևէ փաստական տվյալ չունի իր կասկածները հիմնավորելու համար, ապա այդպիսի կասկածներին պետք է վերաբերվել որպես քննչական վարկածի և նախաքննություն իրականացնել, սակայն բոլոր այն դեպքերում, երբ տուժողը կոնկրետ անձի հաստատապես մատնանշում է որպես ենթադրյալ հանցանք կատարողի, թեև մեղադրանքը հիմնավորող նյութերում կոնկրետ մեղքը հիմնավորող նյութեր առկա չեն, փոխարենն առկա են դեպքը հիմնավորող նյութեր, միաժամանակ դատարանը գտնում է, որ դատաքննության ընթացքում իր լիազորությունների մեջ մտնող ապացուցողական գործողությունները (զննում, քննում, արտաշիրմում, փորձաքննություն, ճանաչման ներկայացնել և տեղեկատվության պահանջ) բավարար են գործի պատշաճ քննության համար, ապա կարող է քրեական վարույթ սկսել՝ հիմնվելով դեպքի առկայության և տուժողի համոզմունքի վրա: Այսպիսի մոտեցման նպատակն է հնարավորինս խուսափել տուժողի անհայտ լինելու հանգամանքի ոչ ճիշտ մեկնաբանման պայմաններում մասնավոր գանգատի գործերով նախաքննական մարմիններին ավելորդ ծանրաբեռնելու վտանգից:

3. Օրենսգրքի 451-րդ հոդվածը լրացնել սույն հոդվածում առաջարկված եղանակով, որպեսզի հնարավոր լինի Օրենսգրքի 151-րդ հոդվածով սահմանված ծանուցման ավելի լայն եղանակները կիրառել մասնավոր վարույթի գործերով: Այսպիսի կարգավորումը կբացառի քրեական հայցը վարույթ չընդունելը բոլոր այն դեպքերում, երբ տուժողը չգիտի անձի հասցեն, սակայն տիրապետում է ծանուցման համար թույլատրելի այլ տեղեկատվության (ուսման, աշխատանքի, ծառայության վայրի հասցե, պաշտոնական էլեկտրոնային հասցե կամ հեռախոսահամար):

4. Պարբերաբար նույնաբնույթ հանցանք կատարած անձանց հանրային վտանգավորությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է անկախ տուժողի կամարտահայտությունից դատախազին ընձեռել հայեցողական լիազորություն հանրային քրեական հետապնդում հարուցելու համար՝

Օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնելով համապատասխան 3-րդ կետով¹:

**Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի
և գրականության ցանկ**

1. ՀՀ սահմանադրություն, ընդունման ամսաթիվը 06.12.2015, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 22.12.2015, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118:
2. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, ընդունման ամսաթիվը 04.11.1950, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.06.05/17(192), հոդ. 367:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունման ամսաթիվը 30.06.2021, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.07.2022, սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2021.07.26-2021.08.08, պաշտոնական հրապարակման օրը՝ 28.07.2021:
4. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունման ամսաթիվը 05.05.2021, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.07.2022, սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2021.05.17-2021.05.30, պաշտոնական հրապարակման օրը՝ 27.05.2021:
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունման ամսաթիվը 05.05.1998, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.01.1999, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունման ամսաթիվը 09.02.2018, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 09.04.2018, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 018.03.05/16(1374), հոդ. 208:

¹ Անձի կողմից պարբերաբար նույնաբնույթ հանցանք կատարելու հանգամանքի մասին կարող են վկայել դատվածության առկայությունը, ՕՀՄ-ների արդյունքները, քրեական վարույթի կարճման որոշումը ենթադրյալ հանցանք կատարած անձին հայտնաբերելու հիմքով, եթե տուժողը չի դիմել մասնավոր դատարան և այլն:

7. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը 23.09.2003, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 15.11.2003, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2003.11.05/55(290), հոդ. 1016:
8. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը 18.05.2015, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.07.2015, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2015.06.18/35(1124), հոդ. 462;
9. «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը 08.04.2015, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 16.05.2015, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.05.06/26(1115), հոդ. 343:
10. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, ընդունման ամսաթիվը 04.12.2001, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.03.2002, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2002.01.10/2(177), հոդ. 2:
11. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու եվ դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թ.-ի նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշում:
12. Barsova v. Russia գործով 22.10.2019 թ. վճիռը, գանգատ թիվ 20289/10, կետեր 33-34: Մեջբերումն ըստ Ա. Ղազարյանի «Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելի հիմնախնդիրների մասին» հոդվածի, Պետություն և իրավունք N 3 (88) 2020:
13. **Ղազարյան Ա.Ա.**, Մասնավոր մեղադրանքը և մասնավոր մեղադրանքի գործերը մրցակցային քրեական դատավարությունում, Երևան 2022, Մագաղաթ հրատարակչություն:
14. **Ղուկասյան Հ.Հ., Մելքոնյան Դ.Մ., Նիկողոսյան Ա.Ս.**, ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս 2022 թ.:

15. **Սվանիձե Է., Հարությունյան Հ.Գ., Մատինյան Տ.Գ.,** Արդարադատության ոլորտի վերաբերյալ հանրության կարծիքները և ակնկալիքները Հայաստանում, ԵՄ «Արդարադատության մոնիթորինգ» ծրագիր Հայաստան, մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ զեկույց, 2017 թ.:

https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1057954891731_Justice_Monitoring.pdf վերջին դիտում՝ 01.05.2023 թ.

16. **Թումասյան Դ.Ա., Հովհաննիսյան Կ.Հ.,** ՀՀ քրեական իրավունք, հատուկ մաս: Երևան, 2022:

17. **Մեղրյան Ս.Գ.,** Ապացույցները և ապացուցումը ՀՀ քաղաքացիական դատավարությունում: Երևան, 2020:

18. **Ղամբարյան Ա.Ա., Հովհաննիսյան Գ., Մարգարյան Ա.,** Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարություններում: Երևան, 2017, ՎՄՎ-Պրինտ հրատարակչություն

19. **Ղազարյան Ա.Ա.,** Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելի հիմնախնդիրների մասին, Պետություն և իրավունք N 3 (88) 2020, էջեր 76-85:

http://www.yasu.am/files/Artak_Ghazaryan_76-85.pdf վերջին դիտում՝ 01.05.2023 թ.

20. **Баулин О.В.** Бремя доказывания при разбирательстве гражданских дел. Дисс.докт. юрид. наук. - М., 2005.

21. <https://www.ontariocourts.ca/ocj/files/guides/guide-private-prosecution-EN.pdf> վերջին դիտում՝ 01.05.2023 թ.

22. Private prosecutions, fraud advisory panel, an introduction to UK legislation |July 2020| second edition, <https://www.fraudadvisorypanel.org/wp-content/uploads/2020/07/Private-Prosecutions-2nd-ed-July2020.pdf>

НОВАЯ МОДЕЛЬ ЧАСТНОГО ОБВИНЕНИЯ - ЭТО СПОСОБ ЭКОНОМИИ ГОСУДАРСТВЕННЫХ СРЕДСТВ ИЛИ «ЗАКОННЫЙ» СПОСОБ ПРЕНЕБРЕЖЕНИЯ ДЕЛАМИ ЧАСТНЫХ ЖАЛОБ НА ГОСУДАРСТВЕННОМ УРОВНЕ?

Аннотация

Статья посвящена изучению правовых норм, предусмотренных в производстве частного обвинения. Учитывая новизну производства для правовой системы РА, был исследован круг преступлений, подлежащих расследованию в рамках производства по частному обвинению, их характер и соответствие особенностям производства.

Поскольку на потерпевшего, согласно новым правилам, возложена обязанность доказывания по делам производства по частному обвинению, посредством изучения различных правовых актов были представлены ограниченные юридические возможности потерпевшего при осуществлении этой обязанности. С точки зрения законодательного регулирования представляет интерес также приобретение лицом статуса обвиняемого по указанному производству, поэтому было представлено восприятие этого статуса в других правовых актах и его влияние на вес материалов, обосновывающих обвинение. Особое внимание было уделено требованиям, предъявляемым к уголовному иску. Предметом рассмотрения стали, в частности, формулирование материалов, обосновывающих обвинение, и указание адресов проживания или учета лиц, вызываемых в суд, в качестве требований, предъявляемых к уголовному иску.

Учитывая усиление элементов диспозитивности в производстве по частному обвинению, был проведен сравнительный анализ

соответствующих регулирований уголовного судопроизводства и гражданского судопроизводства.

Раскрыты возможности возбуждения уголовного преследования по частному обвинению в случае совершения лицом периодически аналогичных преступлений в контексте предоставления прокурору соответствующих дискреционных полномочий.

Ключевые слова: частная жалоба, потерпевший, обвиняемый, бремя доказывания, дискреционные полномочия, частный суд.

**THE NEW MODEL OF PRIVATE ACCUSATION
(PROSECUTION): A WAY TO SAVE PUBLIC RESOURCES
OR "LEGALLY" IGNORED PRIVATE COMPLAINTS
AT THE STATE LEVEL?**

Annotation

◆ The article is devoted to the study of legal norms provided in the procedure of private prosecution. Considering the actuality of the process within the legal system of the Republic of Armenia, we studied the range of crime elements that are the subject of investigation in the framework of private prosecution proceedings, their nature and compliance with the specifics of the proceedings.

◆ Since, according to the new rules, the victim has become the main responsible for the evidence in cases of private prosecution, we have introduced the limited legal possibilities of the victim while implementing the given duty taking into account various studies of legal acts. From the point of view of legislative regulation, the acquisition process of the status of the accused person within the given proceeding is also interesting, therefore, we revealed

approaches to this status in other legal acts and its impact on the materials substantiating a criminal case. Particular attention is paid to the requirements for claiming a criminal case. In particular, the formulation of materials substantiating the accusation as well as the indication of the residence or registration addresses of the persons summoned to the court being considered as requirements submitted to the criminal lawsuit have been subjects of interest.

Taking into account the strengthening of dispositive elements in the private prosecution, a comparative analysis of the relevant procedures of criminal and civil proceedings was carried out.

The possibilities of initiating a public criminal prosecution in the case of a private accusation have been revealed in the case of a person regularly committing the same type of crimes within the context of giving the prosecutor the appropriate discretionary authority.

Keywords: private complaint, victim, accused, burden of proof, discretionary authority, private court.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.05.2023թ., փրվել է գրախոսության 08.05.2023թ., ընդունվել է փպագրության 13.05.2023թ.: